# ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

## 1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.

*Էլ Զահիրա թաղին մէջ, ոչ շատ հեռու Ղպտիներու Աբու Նոզմա Վանքին եկեղեցիէն, որ կ'գտնուէր Այգեստանի և Գահիրէի միջև եղած կամուրջին մօտերը։ — Այս եկեղեցին նախապէս կ'պատկանէր Մելքիթներուն, և Պատրի Իւլ Կէմալ Հայազգի Վզրուկը 1076-ին Հայոց տուաւ զայն, Գրիգոր Բ. Վկայասէրի Եգիպտոս այցելութեան միջոցին։*

## 2. Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ.

*Տէյր Էլ Խանդակ թաղին մէջ. նախապէս կ'պատկանէր Ղպտիներուն. աւերակ էր բոլորովին, երբ, շուրջ 1084-ին, Առաջնորդ Գրիգոր Արքեպիսկոպոսի խնդրանքով, Պատրի Իւլ Կէմալ տուաւ զայն Հայոց, որոնք ընդարձակեցին և*

հանրապէս եկեղեցիներու կամ ուխտավայրերու մէջ կ'զետեղուէին, եւ Հայ խաչքար մը Հայ եկեղեցիի մը կամ Հայ ուխտավայրի մը գոյութեան նշան է անհրաժեշտաբար։ Եթէ այս խաչքարը ուրիշ երկրէ բերուած չէ հոս, կամ եթէ թուականը նշանակող այդ տառերը վերջին ժամանակի գործ չեն, ինչ որ հաւանական չ'թուիր, այս խաչքարը Եգիպտահայ պատմութեան համար ունի հետաքննական արժէք, զի կ'ձգտի հաստատել նոյնիսկ Ժ. դարուն, այսինքն Վկայասէրին Եգիպտոս գալէն շուրջ դար մը առաջ արդէն Հայ Եկեղեցիի գոյութիւնը այս երկրի մէջ։